

**Չևորգ Բարսեղյան**

*Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի սասյիրանտ, դասախոս*

**ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ (ՏԵՄՊՈՐԱԼ) ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ<sup>1</sup>**

**Համառոտագիր**

Հանցագործությունների որակման գործընթացում իր կարևորությամբ առանձնանում է քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարումը: Քրեական իրավունքի սկզբունքները պարտավորեցնում են քրեաիրավական ստույգ գնահատական տալու հանցավոր արարքին և կատարվածին համապատասխան՝ քրեական պատասխանատվության ենթարկելու այն կատարած անձին: Խնդրի լուծումը, սակայն, դժվարանում է որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների պատճառով:

Քրեաիրավական նորմերի մրցակցությունը տարողունակ երևույթ է, որն առկա է քրեաիրավական հարաբերության զարգացման ողջ գործընթացում՝ հանցանքի կատարման փաստից մինչև դատվածության վերացվելը կամ մարվելը: Սույն հետազոտության նպատակը հանցագործությունների որակման համատեքստում քրեաիրավական նորմերի ժամանակային (տեմպորալ) և տարածական մրցակցության հիմնախնդիրների համալիր հետազոտումն է:

Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության և իրավական մոդելավորման մեթոդները:

Իրականացված հետազոտության հիման վրա հողվածում ներկայացված են տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցության (ժամանակային մրցակցություն), ինչպես նաև ՀՀ քրեաիրավական նորմերի՝ այլ պետությունների և միջազգային-իրավական նորմերի հետ մրցակցության դեպքում հանցագործությունների որակման տեսանկյունից գիտագործնական նշանակություն ունեցող առաջարկներ:

**Հիմնաբառեր** - քրեաիրավական նորմերի մրցակցություն, քրեական օրեն-

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 08.02.2023 թ., գրախոսվել է 22.03.2023 թ.:

քի գործողությունը ժամանակի ընթացքում, քրեական օրենքի հետադարձ ուժ, եզակի բարդ հանցագործություններ, քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային, դիվանագիտական անձեռնմխելիության, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքներ, վիրտուալ տարածությունում (համացանցում) կատարվող հանցանքներ, էքստրադիցիա:

### **Ներածություն**

**Թեմայի արդիականությունը:** Հանցագործությունների որակման գործընթացում իր կարևորությամբ առանձնանում է քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարումը:

Քրեական իրավունքի սկզբունքները պարտավորեցնում են քրեաիրավական ստույգ գնահատական տալու հանցավոր արարքին և կատարվածին համապատասխան՝ քրեական պատասխանատվության ենթարկելու այն կատարած անձին: Խնդրի լուծումը, սակայն, դժվարանում է որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների պատճառով: Հանախ անձի հանրորեն վտանգավոր մեկ արարքին քրեաիրավական գնահատական է տրվում քրեաիրավական մի քանի նորմով, կամ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հարցը լուծելիս առկա է լինում միաժամանակ մի քանի նորմ կիրառելու հնարավորություն և այլն: Հիշատակված դեպքերում առկա է քրեաիրավական նորմերի մրցակցություն, որը պետք է հաղթահարվի քրեական իրավունքի սկզբունքներին համապատասխան: Մրցակցության հաղթահարման ընթացքում առաջացող բարդությունները հաճախ պայմանավորված են քրեական օրենքում կոլիզիոն նորմերի բացակայությամբ: Որոշ դեպքերում քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարումը բարդանում է օրենսդրական տեխնիկայի անկատարության, հանցակազմերի իրավական մոդելավորման թերիության և նորմատիվային ավելցուկի պատճառով:

Քրեաիրավական նորմերի մրցակցությունը տարողունակ երևույթ է, որն առկա է քրեաիրավական հարաբերության զարգացման ողջ գործընթացում՝ հանցանքի կատարման փաստից մինչև դատվածության վերացվելը կամ մարվելը: Մույն հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվում քրեաիրավական նորմերի միայն ժամանակային (տեմպորալ) և տարածական մրցակցության հիմնախնդիրներին, որոնք առաջանում են հանցագործությունները որակելիս:

ՀՀ քրեական նախկին օրենսգրքում մրցակցություն էրևույթը սահմանող կամ դրա լուծումն առաջադրող որևէ նորմ չկար, քրեաիրավական նորմերի մրցակցությանն առնչվող հարցերն օրենսդրական մակարդակով լուծված չէին, ինչը բացասաբար էր անդրադառնում դատական պրակտիկայի վրա:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում թեպետ ամրագրված են քրեաիրավական նորմերի մրցակցության հաղթահարմանն առնչվող կարգավորումներ, այդուհան-

դերձ դրանք չեն կարող համարվել քրեաիրավական նորմերի մրցակցություն երևույթը համապարփակ կարգավորող: ՀՀ քրեական նոր օրենսգրքում ևս առկա են որոշ կարգավորումներ, որոնք քննարկվող հարցի տեսանկյունից ճշգրտման կարիք ունեն:

Վերը շարադրվածը վկայում է թեմայի արդիականության մասին:

**Թեմայի նպատակը և խնդիրները:** Սույն հետազոտության նպատակը հանցագործությունների որակման գործընթացում քրեաիրավական նորմերի ժամանակային և տարածական մրցակցության խնդիրների համալիր հետազոտումն է:

Նշված նպատակին հասնելու համար առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցության իրավական էության և դրա առաջացման պատճառների որոշում,
- եզակի բարդ (տևող, շարունակվող, երկրնտրելի արարքներով նկարագրված) հանցագործությունների, ինչպես նաև հանցակցությամբ կատարված հանցանքների պարագայում արարքի կատարման պահի որոշման և քրեական օրենքի հետադարձ ուժի առանձնահատկությունների հետազոտում,
- քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի համատեքստում հանցանքների կատարման վայրի որոշման առանձնահատկությունների հետազոտում,
- քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքների համատեքստում քրեաիրավական նորմերի մրցակցության առանձնահատկությունների հետազոտում,
- քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության սկզբունքների և հանցանք կատարած անձանց հանձնելու (էքստրադիցիա) ինստիտուտի միջև քրեաիրավական նորմերի մրցակցության առանձնահատկությունների ուսումնասիրում,

ՀՀ քրեական օրենսդրության և դրա կիրառման պրակտիկայի կատարելագործմանն ուղղված առաջարկների մշակում:

**Հետազոտության ժամանակ կիրառված մեթոդները:** Հետազոտության օբյեկտը և առարկան դիտարկվել են գիտական ճանաչողության այնպիսի ընդհանուր (համագիտական) և հատուկ մեթոդների կիրառմամբ, ինչպիսիք են դոգմատիկ, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության և իրավական մոդելավորման մեթոդները:

### **1. Տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցությունը (ժամանակային մրցակցություն)**

Ժամանակի ընթացքում քրեաիրավական նորմերի մրցակցությունն առկա է այն դեպքում, երբ հանրորեն վտանգավոր արարքի համար պատասխանատվու-

թյունը նախատեսված է տարբեր ժամանակահատվածներում գործած երկու կամ ավելի նորմերով:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի<sup>2</sup> (այսուհետ՝ Օրենսգիրք) 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ Օրենսգրքով նախատեսված հանցանքը կատարելու ժամանակ է համարվում գործողությունը կամ անգործությունը կատարելու պահը՝ անկախ հետևանքներն առաջանալու պահից<sup>3</sup>:

Տարբեր պատճառներով, սակայն, հանրորեն վտանգավոր մեկ արարքը կարող է ընդգրկվել տարբեր ժամանակահատվածներում գործած երկու կամ ավելի օրենքներով: Տարբեր ժամանակահատվածներում ուժի մեջ մտած քրեաիրավական նորմերի մրցակցության հարցերը լուծված են Օրենսգրքի՝ քրեական օրենքի հետադարձ ուժի կարգավորումներն ամրագրող նորմերով (հոդված 9):

Արարքի որակման ժամանակ, որի հատկանիշները նախատեսված են տարբեր ժամանակահատվածներում գործող քրեական մի քանի օրենքներով, կիրառման է ենթակա ավելի մեղմ օրենքը: Այդպիսին կարող է լինել արարքի կատարման ժամանակ գործած օրենքը, որի դեպքում կիրառվում են Օրենսգրքի 8-րդ հոդվածի կարգավորումները: Իսկ երբ ավելի մեղմ է արարքի կատարումից հետո ուժի մեջ մտած օրենքը, սպա գործում են Օրենսգրքի 9-րդ հոդվածով ամրագրված կարգավորումները:

Տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցությունը հնարավոր է հանցագործությունների որակման, պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատման, դատվածության մարման ընթացքում: Ընդ որում, հարկ է նշել, որ քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության դեպքում մեկ հատկանիշով ավելի մեղմ կարող է լինել մի նորմ, մեկ այլ հատկանիշով՝ այլ նորմ<sup>4</sup>:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ քննարկվող հարցի համատեքստում առաջ են եկել քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության խնդրահարույց հարցեր: Ավաճող վերաբերում է այն դեպքերին, երբ քրեական նոր օրենքը անձի պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Այսպես, օրինակ, Օրենսգրքի 351-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նա-

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2021 թ. մայիսի 5, ՀՕ-199-Ն: Գործում է:

<sup>3</sup> Սույն հետազոտության շրջանակներում ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության, այդ թվում՝ հետադարձ ուժի վերաբերյալ կարգավորումները քննարկվում են այնքանով, որքանով դա անհրաժեշտ է տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցության հարցերը համակողմանի ներկայացնելու համար:

<sup>4</sup> Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 70:

խատեսում ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների տեղաբաշխման, նախագծման, կառուցման, վերանորոգման, վերակառուցման, շահագործման կամ շահագործումից հանելու, վերագործարկման, միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի տեղափոխման, պահպանման կամ օգտագործման ընթացքում անվտանգության կանոն կամ պահանջ խախտելու համար այն անձի կողմից, որը, ըստ պայմանագրի կամ ծառայողական դիրքի, պարտավոր էր պահպանել այդ կանոնը կամ պահանջը, որն անզուշույթամբ առաջացրել է մարդու մահ, շրջակա միջավայրի ռադիոակտիվ վարակում կամ այլ ծանր հետևանք: Մույն հոդվածով, ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի, ավելի մեղմ պատիժ է նախատեսված: Մինևույն ժամանակ նոր օրենսգրքի 351-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, ծանր հանցանք է համարվում, մինչդեռ նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասը, նախկին քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, միջին ծանրության հանցանք էր, հետևաբար այս տեսանկյունից քրեական նոր օրենքը անձի վիճակը վատթարացնող է: Անձի արարքը Օրենսգրքի 351-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու դեպքում նա չի կարող ազատվել քրեական պատասխանատվությունից գործուն գոջալու հիմքով, քանի որ, ի թիվս այլնի, գործուն գոջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելու իրավաչափության պայմաններից է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած լինելը: Սակայն անձի արարքը նախկին քրեական օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու պարագայում հնարավոր կլիներ անձին ազատել քրեական պատասխանատվությունից գործուն գոջալու հիմքով, քանի որ կատարվածը համարվելու էր միջին ծանրության հանցանք: Շարադրվածը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ քրեական նոր օրենքը անձի պատիժը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Ընդ որում, այսպիսի պատկեր հանդիպում է Օրենսգրքի՝ աշխատանքների և գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով կամ պահանջներով սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունները նկարագրող գրեթե բոլոր հանցակազմերի պարագայում:

Քննարկվող և նմանատիպ դեպքերում հարց է առաջանում՝ արդյո՞ք օրենքին պետք է տալ հետադարձ ուժ, եթե այո, ապա ո՞ր մասով: Այսպիսի իրավիճակները Օրենսգրքով կարգավորված չեն: Օրենսգրքի 9-րդ հոդվածը կարգավորում է միայն այն դեպքերը, երբ քրեական նոր օրենքը պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է և միաժամանակ մասնակիորեն խստացնող՝ ամրագրելով, որ նման օրենքը, քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման չափանիշների համապատասխան, հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը (հոդված 9-րդ, մաս 6): Սակայն քննարկվող դեպքում քրեական նոր օրենքը պատասխանատվությունը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Անձի վիճակի վատթարա-

ցումը, բնականաբար, տարբերվում է պատասխանատվության խստացումից: Հնարավոր են դեպքեր, երբ վատթարացումը չդրսևորվի պատասխանատվության խստացման տեսքով, այլ արտահայտվի հանցագործությունների դասակարգման մեջ փոփոխությամբ կամ պատժի նշանակման կանոնների փոփոխությամբ:

Քննարկվող և նմանատիպ դեպքերը քրեական իրավունքի սկզբունքներին և քրեական օրենքի հետադարձ ուժի նորմերին համահունչ կարգավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Օրենսգրքի՝ քրեական օրենքի հետադարձ ուժը վերտառությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել համապատասխան լրացում՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող կամ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Քրեաիրավական նորմերի ժամանակային մրցակցության առավել խնդրահարույց հարցերից է արարքի կատարման պահի որոշումը եզակի բարդ (տևող, շարունակվող, երկընտրելի արարքներով նկարագրված) հանցագործությունների, ինչպես նաև հանցակցությամբ կատարված հանցանքների պարագայում: Սակայն արարքի որակման տեսանկյունից՝ որոշ բարդություններ առաջանում են նաև պարզ ձևական հանցակազմերի միջոցով նկարագրված այն հանցագործությունների պարագայում, որոնց օբյեկտիվ կողմը ժամանակի մեջ երկարաձգված է, իրականացվում է տևող գործողության միջոցով. օրինակ՝ փոստի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով սուտ մատնություն կատարելը:

Վերը շարադրվածի կապակցությամբ քննարկենք հետևյալ օրինակը: Ա-ն նախկին քրեական օրենսգրքի գործողության ընթացքում Բ-ի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն է պատրաստել և փոստով ուղարկել իրավասու մարմնին, սակայն հաղորդումը իրավասու մարմնին է հասել քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո: Այս դեպքում հարց է առաջանում, թե ո՞ր օրենքով պետք է որակել Ա-ի արարքը՝ նախկին, թե՞ գործող: Այս հարցի պատասխանը պայմանավորված է ժամանակի մեջ քրեական օրենքի գործողության և սուտ մատնության վերաբերյալ քրեաիրավական նորմերի բովանդակության համադրված վերլուծությամբ: Արարքի որակման համար էական է սուտ մատնության կատարման պահի որոշումը: Օրենսգրքի 476-րդ հոդվածում ամրագրված հանցակազմի դիսպոզիցիայից հետևում է, որ արարքն ավարտված է համարվում իրավասու մարմնին հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալու պահից: Մեր կարծիքով իրավասու մարմնին տեղեկություն տալու պահ է համարվում համապատասխան տեղեկության՝ իրավասու մարմնի մուտք լինելու՝ իրավասու մարմնում ստացվելու պահը, ինչից սկսած իրավասու մարմնի աշխատակիցը օբյեկտիվ հնարավորություն ունի

ծանոթանալու տեղեկությանը: Այսպիսով, քննարկվող դեպքում, կարծում ենք, անձի արարքը պիտի որակվի իրավասու մարմնում անձի ներկայացրած տեղեկության ստացման պահին գործող քրեական օրենքով, տվյալ պարագայում՝ քրեական նոր օրենսգրքով:

Հետաքրքրական է նաև այն իրավիճակը, երբ անձը էլեկտրոնային եղանակով կամ փոստով սուտ տեղեկություն է ուղարկել, որը իրավասու մարմնում ստացվել է նախկին քրեական օրենսգրքի գործողության ժամանակ, սակայն իրավասու մարմնի աշխատակիցը տեղեկությանը ծանոթացել է քրեական նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո միայն: Մեր կարծիքով՝ իրավասու մարմնի աշխատակցի կողմից տեղեկությանը ծանոթանալու հանգամանքը դուրս է սուտ մատնության վերաբերյալ նորմի դիսպոզիցիայից, հետևաբար անձի արարքը պետք է որակվի իրավասու մարմնում անձի ներկայացրած տեղեկության ստացման պահին գործող քրեական օրենքով, տվյալ դեպքում՝ նախկին քրեական օրենսգրքով:

Տևող են համարվում այն հանցագործությունները, որոնց դեպքում հանրորեն վտանգավոր գործողությունը կամ անգործությունը իրականացվում է տևականորեն: Այդպիսի հանցագործությունները բնութագրվում են որոշակի հանցակազմի անընդհատ իրականացմամբ<sup>5</sup>: Տևող հանցագործությունը փաստացի ավարտվում է՝ 1. հանցավորի արարքներով (մեղայականով ներկայանալ, պարտականությունները կատարել), 2. իրավապահ մարմինների գործողություններով (հանցավորին բռնել), 3. այլ հանգամանքների ուժով (հանցավորի մահով, ապաքրեականացմամբ)<sup>6</sup>:

Շարունակվող է համարվում այն հանցագործությունը, որը բաղկացած է մեկից ավելի նույնական արարքներից, որոնք առանձին վերցրած թեկուզև ինքնուրույն հանցակազմ են ներկայացնում, բայց ընդգրկված են միասնական դիտավորության մեջ և ունեն մեկ ընդհանուր նպատակ, ուստի միասին վերցրած՝ դիտվում են իբրև մեկ հանցագործություն<sup>7</sup>:

Տևող և շարունակվող հանցագործությունների էության, կատարման պահի վերաբերյալ 2003 թվականի քրեական օրենսգրքում կարգավորումներ առկա չէին: Այդպիսի կարգավորումներ ամրագրվեցին ՀՀ քրեական նոր օրենսգրքում: Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ տևող հանցագործությունը տևական ժամանակահատվածում միևնույն հանցանքի անընդհատ իրականացումն է, իսկ հիշյալ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի հա-

<sup>5</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 50:

<sup>6</sup> Տե՛ս Иногорова-Хегай Л.В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 72:

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրիելյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 50:

մաճայն՝ շարունակվող հանցագործությունը մեկ միասնական դիտավորությամբ միևնույն օբյեկտի դեմ ուղղված նույնական արարքներով հանցանքի կատարումն է: Օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով: Շարունակվող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության իր միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահին գործող քրեական օրենքով:

Տևող և շարունակվող հանցագործությունների իրավաբանական և փաստական ավարտի պահը առավել հաճախ չի համընկնում: Հեղինակների մի մասի կարծիքով՝ տևող հանցագործությունն անհրաժեշտ է որակել քրեական այն օրենքով, որի գործողության ժամանակ արարքը կատարվել է (իրավաբանական ավարտ)՝ անկախ հանցավոր արարքի փաստացի ավարտի պահից<sup>8</sup>: Այլ գիտնականներ կարծում են, որ տևող հանցագործությունն անհրաժեշտ է որակել քրեական այն օրենքով, որի գործողության ընթացքում արարքը փաստացի ավարտվել է (փաստական ավարտ):

Տևող հանցագործությունը արարքի իրավաբանական ավարտի պահին գործած օրենքով որակելու տեսակետի կողմնակիցների հիմնական փաստարկները պայմանավորված են իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքով և օբյեկտիվ մեղսայնացման արգելքով: Սակայն այս դեպքում խնդիրներ են առաջանում՝ կապված հանցանքի իրավաբանական ավարտի պահի որոշման հետ: Հնարավոր են դեպքեր, երբ անհնար լինի որոշել հանցանքի իրավաբանական ավարտի պահը: Այսպիսի մոտեցումը խնդրահարույց է նաև վաղեմության ժամկետների հաշվարկման տեսանկյունից: Ավաճառ վերաբերում է նաև շարունակվող հանցագործություններին:

Վերը շարադրվածի հաշվառմամբ, կարծում ենք, առավել արդարացված և հիմնավոր է դիտվում տևող և շարունակվող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման ժամանակ համարել արարքի փաստական ավարտի պահը, հետևաբար, տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին գործող քրեական օրենքով, իսկ շարունակվող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության իր միասնական դիտավորության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահին գործող քրեական օրենքով:

Հարկ է նաև արձանագրել, որ շարունակվող հանցագործության օբյեկտիվ կողմը կազմող այն արարքները, որոնք մինչև քրեական նոր օրենքի ուժի մեջ

<sup>8</sup> Ст'у Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջեր 72-74:



մտնելը չեն համարվել հանցագործություն, չեն կարող մեղսագրվել անձին: Այլ կերպ ասած՝ հանցավորին կարող են մեղսագրվել միայն շարունակվող հանցագործության մաս կազմող այն արարքները, որոնք կատարվել են դրանք քրեականացնող նոր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո միայն, իսկ միաբնույթ արարքներից նրանք, որոնք կատարվել են մինչև այդ արարքները քրեականացնող օրենքի ուժի մեջ մտնելը, չեն կարող մեղսագրվել վերջինիս<sup>9</sup>:

Տեսագործական առումով հետաքրքրական են այն դեպքերը, երբ տևող հանցագործության իրավաբանական ավարտը չի հանգեցնում դրա փաստացի ընդհատմանը, իսկ այդ ընթացքում փոխվում է քրեական օրենքը: Ասվածը գործնականում պատկերացնելու համար քննարկենք հետևյալ օրինակը: Ա-ն 2022 թվականի մայիսին ենթարկվել է քրեական պատասխանատվության ֆինանսական բուրգ ղեկավարելու համար, սակայն դրանից հետո, ներառյալ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի գործողության պայմաններում, ըստ էության, չի դադարեցրել և շարունակել է այդ ֆինանսական բուրգի ղեկավարումը: Նկարագրված և նմանատիպ իրավիճակներում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի գրկում տևող հանցագործության հետագա իրականացումը ինքնուրույն հանցավոր բնույթից, ինչը պահանջում է համապատասխան քրեաիրավական արձագանք՝ լրացուցիչ որակում: Մեր կարծիքով՝ դիտարկվող իրավիճակներում պետք է ղեկավարվել այն կանոնով, ըստ որի՝ տևող հանցագործության համար ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը՝ որպես իրավական ֆիկցիա, ավարտում է այդ հանցագործության ընթացքը, իսկ դրանից հետո անձի՝ այդ հանցանքը շարունակելուն ուղղված փաստացի արարքները պետք է դիտարկվեն որպես ինքնուրույն հանցագործություն՝ ստանալով առանձին որակում: Փոքր-ինչ հեռվանալով սույն հետազոտության բուն առարկայից՝ հարկ ենք համարում ընդգծել, որ որակման այս կանոնը ունիվերսալ է և կարող է կիրառվել նաև քրեական նույն օրենքի գործողության պայմաններում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մեղադրական դատավճիռը չի ընդհատում տևող հանցագործության իրականացումը:

Երկրնտրելի արարքներով նկարագրված հանցագործությունների կատարման ժամանակի որոշումը կախված է այն հանգամանքից, թե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նկարագրված երկրնտրելի արարքներից քանի՞սն է կատարել հանցավորը: Այս հանցանքների կատարման ժամանակի որոշումը դժվարություն չի ներկայացնում, երբ անձը կատարում է երկրնտրելի արարքներից մեկը. տվյալ դեպքում հանցանքի կատարման ժամանակ է համարվում այդ արարքը իրականացնելու պահը: Մինչդեռ, եթե անձը միասնական դիտավորու-

<sup>9</sup> Տե՛ս Ալվարդ Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 20.10.2011 թ. թիվ ԼԴ/0327/01/10 գործով որոշումը, [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=13229323905400977](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=13229323905400977), (հասանելի է 24.10.2022 թ. դրությամբ):

թյամբ իրականացնում է հողվածի դիսպոզիցիայում նկարագրված երկրնտրելի արարքներից մի քանիսը, որոնց միջև առկա է ժամանակային խզում, ապա հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել դրանցից վերջինը կատարելու պահը: Օրինակ՝ եթե անձը իրացնելու նպատակով կեղծ դրամ (արժույթ) է պատրաստել և պահել 2003 թվականի օրենսգրքի գործողության ժամանակ և նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո միայն իրացրել դրանք, ապա հանցավորի արարքը կատարելու ժամանակ պետք է համարել քրեական նոր օրենքի գործողության ժամանակը, և կատարվածը որակել նոր օրենքով, տվյալ դեպքում՝ Օրենսգրքի 267-րդ հոդվածով: Նշված կանոնը կիրառվում է նաև երկրնտրելի առարկաներով (տուժողներով) հանցագործությունների կատարման ժամանակը որոշելիս: Երկրնտրելի հանրորեն վտանգավոր հետևանքով հանցանքների պարագայում դրանց կատարման ժամանակը որոշվում է՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները:

Հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում կազմակերպչի, դրոշխի և օժանդակողի արարքներն անհրաժեշտ է որակել նրանցից յուրաքանչյուրի արարքի կատարման պահին գործող օրենքով: Այսպիսի մոտեցում որդեգրել է նաև Օրենսգրքը, որի 8-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է. «Հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում հանցակիցներից յուրաքանչյուրը ենթակա է քրեական պատասխանատվության իրեն վերապահված արարքը կատարելու պահին գործող քրեական օրենքով»: Միայն այն դեպքում, երբ կատարողը հանցակիցների դիտավորությունն իրականացնում է նոր ավելի մեղմ օրենքի գործողության ընթացքում, հանցակիցների արարքները ևս, քրեական օրենքի հետադարձ ուժի կարգավորումներին համապատասխան, անհրաժեշտ է որակել նոր՝ ավելի մեղմ օրենքով<sup>10</sup>:

Տարբեր ժամանակահատվածներում գործած քրեաիրավական նորմերի մրցակցությունը հաղթահարելու տեսանկյունից ևս մեկ կարևոր դրույթ է ամրագրված Օրենսգրքի 8-րդ հոդվածի 6-րդ մասում, ըստ որի՝ եթե քրեական օրենքը փոփոխվել է քրեական օրենքով նախատեսված արարքը կատարելու ընթացքում, ապա կիրառվում է արարքն ավարտվելու, դադարեցնելու կամ խափանելու պահին գործող օրենքը:

Հարկ է նաև արձանագրել, որ քրեական օրենքի հետադարձ ուժի և ընդհանուր ու հատուկ նորմերի մրցակցության կանոնների միաժամանակյա կիրառման դեպքում նախապատվությունն անհրաժեշտ է տալ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոններին<sup>11</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 78:

<sup>11</sup> Տե՛ս Иногамова-Хегай Л. В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջ 77:

## **2. Հայաստանի Հանրապետության քրեաիրավական նորմերի մրցակցությունը այլ պետությունների և միջազգային-իրավական նորմերի հետ**

Պետական սահմանների «տարրալուծվածության» ժամանակակից պայմաններում ՀՀ և այլ պետությունների քրեաիրավական նորմերի մրցակցությունը (տարածական մրցակցություն) բավականին արդիական է:

Մրցակցության այս տեսակի հիմնական դրույթները ամրագրված են Օրենսգրքում՝ տարածության մեջ քրեական օրենքի գործողության տարածքային, դիվանագիտական անձեռնմխելիության, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքներում:

### **Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունք**

Քրեական օրենքի՝ գործողության տարածքային սկզբունքի պայմաններում օտարերկրյա քաղաքացու կողմից ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում առաջանում է մրցակցություն քրեական երկու օրենքների միջև՝ ՀՀ-ի, որի տարածքում կատարվել է հանցանքը, և այն պետության, որի քաղաքացին է հանցանք կատարած անձը: Այս մրցակցությունը, միջազգային-իրավական հանրաճանաչ սկզբունքներին և Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, լուծվում է հօգուտ հանցանքի կատարման վայրի օրենքի:

Պետական սահմանի մասին ՀՀ օրենքի<sup>12</sup> 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ պետական սահմանը այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները: Պետությունների ազգային տարածք համարվող օդային սյան բարձրությունը միջազգային իրավունքի նորմերով դեռ հստակեցված չէ: Միջազգային տիեզերական իրավունքի հիմնական աղբյուրը՝ Տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների հետազոտման և օգտագործման՝ պետությունների գործունեության սկզբունքների մասին 1967 թ. պայմանագիրը<sup>13</sup>, չի որոշել ազգային օդային տարածության և տիեզերական տարածության միջև եղած սահմանը: Պետության օդային տարածքի վերին սահմանը, միջազգային սովորության իրավունքին համապատասխան, գտնվում է օվկիանոսի մակերևույթից 100 մղոն բարձրության վրա: Այդ սահմաններից դուրս գտնվող օդային տարածքը համարվում է տիեզերական տարածություն, որն ունի միջազգային-իրավական ռեժիմ:

Տիեզերքի մասին պայմանագրի համաձայն՝ տիեզերական տարածությունը

<sup>12</sup> Տե՛ս Պետական սահմանի մասին ՀՀ օրենք, 2001 նոյեմբերի 20, ՀՕ-265: Գործում է:

<sup>13</sup> Տե՛ս Քոչարյան Վ., Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ իրատարակություն, 2002, էջ 333: Броунли Я. Международное право (в двух книгах). Книга первая. М., 1977, էջեր 385–390:

բաց է բոլոր պետությունների կողմից հետազոտման համար, տիեզերական տարածության հետազոտումն ու օգտագործումն իրականացվում է ի շահ բոլոր երկրների՝ անկախ նրանց տնտեսական կամ գիտական զարգացման աստիճանից, և ամբողջ մարդկության սեփականությունն է (հոդված 1): Տիեզերական տարածությունը օդային տարածության սահմաններից դուրս գտնվող տարածությունն է: Տիեզերական տարածության նկատմամբ չի տարածվում որևէ պետության ինքնիշխանությունը: Տիեզերական տարածությունը ենթական չէ ազգային յուրացման ո՛չ դրա նկատմամբ ազգային ինքնիշխանության հռչակմամբ, ո՛չ օգտագործմամբ կամ զբաղեցմամբ, ո՛չ էլ ցանկացած այլ միջոցներով (հոդված 2):

Հարկ է ընդգծել, որ կան նաև այլ օբյեկտներ, որոնք քրեական իրավագործության տեսանկյունից հավասարեցվում են պետության տարածքին: Դրանք պետության նավերն ու օդանավերն են: Այս օբյեկտների վրա հանցանք կատարելու դեպքում քրեական պատասխանատվության առանձնահատկությունները կարգավորված են Օրենսգրքի՝ «Քրեական օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետության նավերի կամ օդային սարքերի վրա քրեական օրենքով նախատեսված արարքը կատարելու դեպքում» վերտառությամբ 11-րդ հոդվածում: Հարկ է ընդգծել, որ քաղաքացիական նավերի և օդանավերի իրավական ռեժիմը տարբերվում է ռազմական նավերի և օդանավերի իրավական ռեժիմից:

Օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո գտնվող կամ տարբերանշանը կրող քաղաքացիական նավի կամ թռիչքի մեջ գտնվող քաղաքացիական օդանավի կամ այլ թռչող սարքի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռազմական կամ կառավարական նավի կամ պետական օդանավի կամ այլ թռչող սարքի (ռազմական, ոստիկանական, մաքսային) վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը, անկախ դրա գտնվելու վայրից, լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով:

Օրենսգրքի՝ 11-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ռազմական կամ կառավարական նավերն ու պետական օդանավերը՝ անկախ դրանց գտնվելու վայրից, համարվում են այն պետության տարածք, որին պատկանում են: Դրանց նկատմամբ տարածվում է տվյալ պետության իրավագործությունը, այդ թվում՝ քրեական:

Իրավիճակն այլ է քաղաքացիական նավերի, օդանավերի, կամ այլ թռչող սարքերի պարագայում: Քաղաքացիական նավերի նկատմամբ, որպես կանոն, որտեղ էլ որ դրանք գտնվեն, տարածվում է այն պետության քրեական իրավա-

սություներ, որի դրոշը կրում են: Նույնը վերաբերում է նաև թռիչքի մեջ գտնվող քաղաքացիական օդանավերին կամ այլ թռչող սարքերին (եթե օդանավը կամ այլ թռչող սարքը թռիչքի մեջ չէ, ապա դրա վրա տարածվում է այն պետության քրեական իրավասությունը, որի տարածքում գտնվում են): Սակայն քաղաքացիական նավերի, օդանավերի կամ այլ թռչող սարքերի կապակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված են բացառություններ:

Այսպես, Ծովային իրավունքի մասին ՄԱԿ-ի 1982 թ. Կոնվենցիան սահմանում է այն դեպքերը, երբ տարածքային և ներքին ջրերում գտնվող օտարերկրյա պետության քաղաքացիական նավի վրա կատարված հանցանքի կապակցությամբ տարածվում է առափնյա պետության քրեական իրավասությունը: Այդ բացառություններն են. 1. եթե կատարված հանցանքի հետևանքները տարածվում են առափնյա պետության վրա, 2. եթե հանցագործությունը խախտում է առափնյա պետության անդորրը, հասարակական կարգը, 3. եթե նավապետը կամ նավի դրոշը ներկայացնող դիվանագիտական գործակալը կամ հյուպատոսարանի պաշտոնատար անձը դիմում է տեղական իշխանություններին օգնության խնդրանքով, 4. եթե առափնյա պետության միջամտությունն անհրաժեշտ է թմրանյութերի կամ հոգեներգործող նյութերի ապօրինի առևտուրը կանխելու համար:

Օդանավերի մեջ կատարվող հանցանքների և որոշ այլ գործողությունների մասին Տոկիոյի 1963 թ. կոնվենցիայի համաձայն՝ թռիչքի մեջ գտնվող օդանավի վրա կատարված հանցանքների կապակցությամբ գործում է այն պետության իրավագործությունը, որտեղ գրանցված է օդանավը: Ընդ որում, այս կանոնը գործում է անկախ նրանից, թե որտեղ է ընթանում թռիչքը՝ չեզոք տարածքում, թե՞ օտարերկրյա պետության օդային տարածքում: Օդանավը համարվում է թռիչքի մեջ գտնվող թռիչքի համար շարժիչը միացնելու պահից մինչև վայրէջքի ժամանակ վազքը դադարեցնելու պահը: Միևնույն ժամանակ կոնվենցիան նախատեսում է բացառություններ, որոնց դեպքում օդանավի վրա կատարվող հանցանքի կապակցությամբ կարող է տարածվել այն պետության քրեական իրավասությունը, որի տարածքում թռիչքի մեջ է գտնվում օտարերկրյա օդանավը: Այդ բացառությունները գործում են հետևյալ դեպքերում. 1. եթե հանցագործության հետևանքները տարածվում են այդ պետության տարածքի վրա, 2. եթե հանցանքը կատարվել է այդ պետության քաղաքացու կողմից կամ նրա դեմ, կամ տվյալ պետությունում մշտապես բնակվող անձի կողմից, կամ նրա դեմ, 3. եթե հանցագործությունն ուղղված է այդ պետության անվտանգության դեմ, 4. եթե հանցագործությունը կապված է տվյալ պետությունում թռիչքների համար սահմանված կարգի խախտումների հետ, 5. եթե այդ պետության միջամտությունն անհրաժեշտ է իր միջազգային բազմակողմ համաձայնագրերից բխող պարտականությունները կատարելու համար:

Այսպիսով, քաղաքացիական նավերի և օդանավերի կամ այլ թռչող սարքե-

րի վրա կատարվող հանցանքների կապակցությամբ, որտեղ էլ որ դրանք գտնվեն, տարածվում է այն պետության քրեական իրավասությունը, որին դրանք պատկանում են, բացառությամբ միջազգային հիշյալ ակտերով նախատեսված դեպքերի:

ՀՀ քրեական օրենսգիրքը կարգավորել է նաև ՀՀ դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը՝ սահմանվելով, որ Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո չգտնվող կամ տարբերանշանը չկրող քաղաքացիական օդանավի վրա քրեական օրենքով նախատեսված արարք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով (Օրենսգիրք, հոդված 11-րդ, 2-րդ մաս):

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության սկզբունքի էությունն այն է, որ կիրառվում է հանցանքը կատարելու վայրի քրեական օրենքը: Ճարտդրվածով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում՝ պարզելու հանցանքի կատարման վայր հասկացությունը, ինչն իրավաբանական գրականության մեջ միանշանակ չի ընկալվում: Մինչդեռ հանցանքի կատարման վայրի ճիշտ որոշումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, քանի որ դրանից է կախված, թե որ պետության քրեական օրենքը պետք է կիրառվի այս կամ այն դեպքում:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված, եթե դրա բաղկացուցիչ մասերից որևէ մեկն իրականացվել է ՀՀ տարածքում: Քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը հանցակցել է ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելուն:

Այս դրոյթները բավականաչափ ընդհանրական բնույթ են կրում, ուստի կարիք ունեն մեկնաբանման և օրենսդրական մակարդակով հստակեցման: Հանցագործությունների տարբեր տեսակների պարագայում հանցանքի կատարման վայրի որոշումը որոշ առանձնահատկություններ ունի:

Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված գործողությունը կամ անգործությունը:

Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դրսևորում համարվող հատված հանցակազմով նկարագրված հանցագործությունների կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված արարքը:

Նյութական հանցակազմի միջոցով նկարագրված այն հանցագործությունների պարագայում, երբ հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ ան-

գործությունը) կատարվում և դրա հետևանքները վրա են հասնում միևնույն տարածքում, հանցանքի կատարման վայրի որոշման հետ կապված բարդություններ չեն առաջանում: Սակայն այլ է վիճակն այն դեպքերում, երբ գործողությունը (անգործությունը) կատարվում է մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա են հասնում մեկ այլ պետության տարածքում: Նման դեպքերում հանցանքը կատարելու վայրի որոշումը կապված է որոշ բարդությունների հետ: Քրեագետների մեծ մասը գտնում է, որ այդպիսի դեպքերում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ վրա են հասել հանրորեն վտանգավոր հետևանքները: Մյուսները գտնում են, որ նման դեպքերում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը՝ անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները<sup>14</sup>:

Հիմք ընդունելով տարածության և ժամանակի անխզելիության գաղափարը՝ առավել հիմնավոր է թվում հանցանքի կատարման վայրը որոշել դրա կատարման ժամանակի հաշվառմամբ: Այս համատեքստում մենք կհսում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների կատարման վայր են համարում այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը՝ անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները: Այս առումով, սակայն, կարող են լինել որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով, որոնք կքննարկվեն ռեալ սկզբունքին անդրադառնալիս:

Տևող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր անհրաժեշտ է համարել այն վայրը, որտեղ փաստացի ավարտվել է տևող հանցագործությունը: Այսինքն՝ այն վայրը, որտեղ բռնվել կամ մեղայականով ներկայացել է հանցանք կատարած անձը, կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվել է: Այս պարագայում ևս առկա են որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով, որոնց ևս անդրադարձ կկատարվի ռեալ սկզբունքին անդրադառնալիս:

Շարունակվող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է շարունակվող հանցագործության մեջ ընդգրկված արարքներից վերջինը:

Չավարտված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ դադարել կամ ընդհատվել է հանցա-

<sup>14</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջեր 61, 62:

Տե՛ս նաև. Актуальные проблемы Общей части уголовного права: учебник / отв. ред. И.А. Подройкина, И.А. Фаргиев. Москва, Проспект, 2020, էջ 32:

վոր արարքը: Իսկ եթե հանցագործությունը (նախապատրաստությունը, հանցափորձը) սկսվել է մի պետության տարածքում, սակայն ավարտվել է մեկ այլ պետության տարածքում, ապա հանցանքի կատարման վայր պետք է համարել այն պետության տարածքը, որտեղ ավարտվել է հանցագործությունը:

Օրենսգրքում ամրագրված են նաև կարգավորումներ՝ կապված հանցակցությանը իրականացվող հանցանքների կատարման վայրի որոշման հետ: Այսպես, քրեական օրենքով նախատեսված արարքը համարվում է ՀՀ տարածքում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը հանցակցել է ՀՀ տարածքից դուրս հանցանք կատարելուն: Այսպիսի կարգավորումը ընդգրկում է արարքների բավականին լայն շրջանակ՝ ի տարբերություն 2003 թվականի քրեական օրենսգրքի, որի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում էր ՀՀ տարածքում կատարված, եթե հանցակցությանը կատարվել էր այնպիսի անձանց հետ, որոնք հանցավոր գործունեություն էին իրականացրել այլ պետության տարածքում. այս կարգավորման պարագայում խոսքը կատարողի մասին էր, հակառակ դեպքում, եթե կազմակերպիչը, որդիչը կամ օժանդակողը գործում էին ՀՀ-ում, իսկ կատարողը՝ այլ պետության տարածքում, հանցանքը չէր կարող համարվել ՀՀ-ում կատարված: Սակայն այս տեսանկյունից Օրենսգիրքը որդեգրել է այլ մոտեցում՝ արարքը համարելով ՀՀ-ում կատարված նաև այն դեպքում, երբ ՀՀ-ում գտնվելու ժամանակ անձը, օրինակ՝ օժանդակողը, հանցակցել է ՀՀ-ից դուրս հանցանք կատարելուն:

Տարածքային սկզբունքը գերծ չէ նաև «տարանցիկ հանցագործությունների» հետ կապված խնդիրներից, որոնք միաժամանակ իրականացվում են մի քանի պետությունների տարածքում<sup>15</sup>: Հարկ է նաև նշել, որ բարձրացված խնդրի կապակցությամբ Օրենսգիրքը կարգավորումներ չի պարունակում:

Քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի հիմնական դրույթների շրջանակներում ձևակերպված տրամաբանական էությանը համապատասխան՝ դրա համատարած և անշեղ գործողության համար պահանջվում է ստեղծել, առանց բացառության, հանցանք կատարած բոլոր անձանց՝ ըստ նրանց կողմից հանցանքի կատարման վայրի՝ պետությանը հանձնելու ճկուն համակարգ: Սակայն նման իրավիճակն ընդունելի չէ նույնիսկ այս սկզբունքի ամենաակտիվ կողմնակիցների համար: Օրինակ՝ ըստ Ռ. Զեսթլինի՝ ավելի ճիշտ է օժտել ներկայացուցչական իրավասության իրավունքով (հանցագործության կատարման վայրում պետության անունից պատասխանատվության ենթարկելու հնարավորություն), քան մեղավորներին հանձնել Գերմանիայի սահմաններից դուրս<sup>16</sup>:

<sup>15</sup> Տե՛ս ֆրոլովա Ա. Ի., Действие российского уголовного закона в пространстве: законодательная регламентация и перспективы совершенствования с учетом опыта уголовного законодательства зарубежных стран: автореф. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2013թ., էջ 14:

<sup>16</sup> Տե՛ս Кӛстлин R. Neue Revision der Grundbegriffe des Kriminalrechts // Allgemeine Literatur-Zeitung. 1845. № 92, էջ 747:



Հանցանքի կատարման վայրի որոշման տեսանկյունից բավականին խնդրահարույց են վիրտուալ տարածությունում (համացանցում) կատարվող հանցանքները: Այս հանցանքների կատարման վայրի հստակեցումն առանձին հետազոտության թեմա է: Մույն աշխատանքի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում մենք համակարծիք ենք այն հետազոտողների հետ, որոնք առաջարկում են նման դեպքերում հանցանքի կատարման վայր համարել համացանցը՝ որպես միասնական իրավական տարածք<sup>17</sup>: Նման իրավիճակում միանգամայն հնարավոր է քրեական հետապնդում իրականացնել այն պետության կողմից, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը, քանի որ տվյալ դեպքում ավելի հեշտ կլինի պարզել պատճառված վնասի չափն ու բնույթը, իսկ գործի քննությունը պետք է կատարվի ոչ թե «հանցագործության կատարման վայրում», այլ տուժողի բնակության (գտնվելու) վայրում: Այսպիսով, համացանցը հանցանքի կատարման վայր ճանաչելու դեպքում պետք է կիրառվի այն պետության իրավագործությունը, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքն ունի նաև բացառություն, որն ամրագրված է Օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում: Հիշատակված դրույթի համաձայն՝ ՀՀ տարածքում քրեական օրենքով նախատեսված արարքը կատարած օտարերկրյա դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունից օգտվող անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան:

Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց շրջանակը որոշվում է միջազգային իրավական ակտերով: Նշված անձինք ՀՀ տարածքում հանցանք կատարելու դեպքում ենթակա չեն քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով: Որպես կանոն՝ այդպիսի անձինք հայտարարվում են

<sup>17</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս հետևյալ հետազոտությունները՝  
Thornton S. State Criminal Laws in Cyberspace: Reconciling Freedom for Users with Effective Law Enforcement. *Richmond Journal of Law & Technology*, 1997, vol. IV, iss. 2. <http://jolt.richmond.edu/v4i2/thornton.html> (հասանելի է՝ 16.07.2022 թ. դրությամբ):  
Miller S. Prescriptive Jurisdiction over Internet Activity: The Need to Define and Establish the Boundaries of Cyberliberty. *Indiana Journal of Global Legal Studies*, vol. 10, iss. 2, art. 8. <https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=1270&context=ijgls> (հասանելի է 16.07.2022 թ. դրությամբ):  
Hilgendorf E. Überlegungen zur strafrechtlichen Interpretation des Ubiquitatzsprinzips im Zeitalter des Internet. *Neue juristische Wochenschrift*, 1997, no. 29:  
Heintschel von Heinegg W. Legal Implications of Territorial Sovereignty in Cyberspace // 4th International Conference on Cyber Conflict. Tallinn, 2012. URL: [https://ccdcoe.org/uploads/2012/01/1\\_1\\_von\\_Heinegg\\_LegalImplicationsOfTerritorialSovereignty-InCyberspace.pdf](https://ccdcoe.org/uploads/2012/01/1_1_von_Heinegg_LegalImplicationsOfTerritorialSovereignty-InCyberspace.pdf) (հասանելի է՝ 16.07.2022 թ. դրությամբ):  
Комаров А.А. Об особенностях территориального принципа действия уголовного закона в сети Интернет, *Вестник Омской юридической академии*. 2016. № 4 (33), էջեր 57-63: <https://cyberleninka.ru/article/n/ob-osobennostyah-territorialnogo-printsipa-deystviya-ugolovnogo-zakonav-seti-internet/viewer> (հասանելի է 16.07.2022 թ. դրությամբ):

*persona non grata* (անցանկալի անձ) և վտարվում են երկրից: Պետք է նշել, սակայն, որ ՀՀ-ում հանցանք կատարած դիվանագետը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել ՀՀ-ում, բայց այն պետության քրեական օրենքով, որն ինքը ներկայացնում է: Բայի այդ, «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի կոնվենցիայի 32-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը կարող է հրաժարվել իր դիվանագիտական ներկայացուցիչների անձեռնմխելիությունից: Այդ դեպքում նշված անձինք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել այն պետության քրեական օրենքներով, որտեղ նրանք կատարել են հանցանքը<sup>18</sup>:

ՀՀ քրեական օրենսգրքով կարգավորվել են նաև անձանց քրեական պատասխանատվության հարցերը, որոնք հանցանք են կատարել ՀՀ տարածքում գտնվող այն վայրում, որտեղ գործում է օտարերկրյա պետության դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունը: Այսպես, Օրենսգրքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անձը քրեական օրենքով նախատեսված արարքը կատարել է Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող այն վայրում, որտեղ գործում է օտարերկրյա պետության դիվանագիտական, հյուպատոսական կամ միջազգային կազմակերպության համար սահմանված անձեռնմխելիությունը, սպա նրա քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

### **Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության քաղաքացիության սկզբունք**

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության հաջորդ սկզբունքը քաղաքացիության սկզբունքն է, որն իր ամրագրումն է ստացել Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, սպաստան հայցող կամ սպաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը հանցանք է համարվում դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Եթե քրեական օրենքով նախատեսված արարքը նշված անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող տարածքում, սպա

<sup>18</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 64:

այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում: Քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարած՝ ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե առկա են ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված պայմանները:

Այս սկզբունքի էությունն այն է, որ ՀՀ քաղաքացիները, այդ թվում՝ երկրադաքացիություն ունեցող անձինք, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձինք, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձինք օտարերկրյա պետությունում կատարված հանցանքի համար ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքը հանցագործություն է ճանաչված ինչպես այդ պետության, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքով: Սակայն այս սկզբունքն ունի բացառություն, ըստ որի՝ ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում հիշատակված անձանց կողմից քրեական օրենքով նախատեսված արարքը ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում նրանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ՀՀ քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց (12-րդ հոդված, 2-րդ մաս):

Հնարավոր են իրավիճակներ, որ հանցանքը կատարվի չճանաչված պետության կամ ընդհանրապես որևէ պետության չպատկանող տարածքում: Նման պարագայում խնդիրներ կարող են ծագել քաղաքացիության սկզբունքի կիրառման առումով: Կարծում ենք՝ ՀՀ քրեական օրենսդրությունը ևս պետք է արձագանքի այդ հարցին:

Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասում այս կապակցությամբ կարգավորում առկա է, սակայն այն վերաբերում է միայն որևէ պետության չպատկանող տարածքին: Հիշատակված նորմը նաև ամրագրել է, որ նշված անձինք որևէ պետության չպատկանող տարածքում հանցանք կատարելու դեպքում ենթակա են քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում: Կարծում ենք, որ նման ձևակերպումը թեև արդարացված է, սակայն անհարկի ընդլայնում է այն արարքների շրջանակը, որոնց պարագայում պետությունը պետք է արձագանքի, քանի որ քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցանքների ճնշող մեծամասնության համար սանկցիայում նախատեսված է ազատազրկում: Թերևս ավելի ճիշտ կլիներ որոշակիորեն սահմանափակել ազատազրկման ժամկետը և օրենսդրորեն ամրագրել, որ այդ դրույթը կիրառելի է այն դեպքերում, երբ կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք: Միևնույն ժամանակ կարծում ենք, որ օրենսդրորեն պետք է ամրագրվի, որ եթե հանցանքը կատարվել է չճանաչված

պետության տարածքում և քաղաքացիության սկզբունքին բավարարող սուբյեկտը հայտնվել է ՀՀ տարածքում, ապա նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով ՀՀ-ում այդ արարքը հանցանք համարվելու պարագայում:

Հիշատակված կարգավորումը նաև վերացրել է ՀՀ 2003 թվականի քրեական օրենսգրքում տեղ գտած անճշտությունը՝ « ... եթե նրանք չեն դատասպարտվել այլ պետության տարածքում» արտահայտության վերաբերյալ: Դրա փոխարեն գործածված է «եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել» արտահայտությունը, ինչը միանգամայն արդարացված է, քանի որ քրեական պատասխանատվությունն ավելի լայն հասկացություն է և միշտ չէ, որ կապված է դատասպարտման հետ. հանցանք կատարած անձը կարող է օրինական հիմքերով ազատվել պատժից կամ պատասխանատվությունից:

Այսպիսով, ՀՀ քաղաքացիության սկզբունքը մրցակցում է այլ պետության տարածքային սկզբունքի հետ, որի տարածքում հանցանքը կատարվել է: Օրինակ, եթե ՀՀ քաղաքացին հանցանք է կատարել Իտալիայում և այնտեղ պատասխանատվության չի ենթարկվել, ապա ՀՀ-ում նրա նկատմամբ քրեական հետապնդում սկսվելու պարագայում նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով. տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիության սկզբունքն առավելություն ունի Իտալիայի՝ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի նկատմամբ:

Հատկանշական և կարևոր է նաև Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը առ այն, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց:

### **Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունք**

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության հաջորդ սկզբունքը ունիվերսալ սկզբունքն է, որն ամրագրված է Օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում. «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց քրեա-

կան պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կողմից կատարված արարքը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հանցանք է, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել՝ անկախ հանցանքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց»:

Ունիվերսալ սկզբունքը բացառություն է ինչպես տարածքային, այնպես էլ քաղաքացիության սկզբունքներից: Այս սկզբունքի էությունն այն է, որ հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում յուրաքանչյուր պետության կողմից իր ազգային օրենսդրությամբ՝ անկախ նրանից, թե որտեղ է կատարվել հանցանքը, և որ պետության քաղաքացի է տվյալ անձը: Այս սկզբունքի կիրառումը պայմանավորված է միջազգային և միջազգային բնույթի որոշ հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտությամբ:

Այսպիսով, հանցանքի կատարման վայրի պետության տարածքային սկզբունքի, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության սկզբունքի և ունիվերսալ սկզբունքի մրցակցության պարագայում առավելությունը պետք է տրվի ունիվերսալ սկզբունքին: Ասվածը նշանակում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել երեք պետությունների քրեական օրենսդրության համապատասխան (հանցանքի կատարման վայրի պետության, այն պետության, որի քաղաքացին է անձը, այն պետության, որտեղ քրեական պատասխանատվության է ենթարկվում), ապա առավելությունը պետք է տրվի այն պետության օրենսդրությանը, որտեղ անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության (ունիվերսալ սկզբունք): Սակայն ունիվերսալ սկզբունքի կիրառումն ունի որոշ առանձնահատկություններ՝ պայմանավորված էքստրադիցիայի ինստիտուտով (այս մասին՝ հաջորդիվ):

**Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունք**

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության մյուս սկզբունքը ռեալ սկզբունքն է, որն ամրագրված է Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասում. «Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ»:

Այսպիսով, մի կողմից ռեալ սկզբունքի, իսկ մյուս կողմից հանցանքի կատարման վայրի պետության տարածքային սկզբունքի, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության սկզբունքի մրցակցության դեպքում նախապատվությունը, ըստ Օրենսգրքի, պետք է տրվի ռեալ սկզբունքին:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ և տարածքային սկզբունքների միջև մրցակցություն կարող է առաջանալ տևող հանցագործությունների պարագայում: Այսպես, ՀՀ տարածքում դասալքություն կատարած անձը, որի արարքը խափանվել է, օրինակ, Բելառուսում, քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի ուժով, քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի ՀՀ քրեական օրենքով՝ անկախ նրանից, որ արարքն ավարտվել է Բելառուսի տարածքում: Այսինքն՝ նմանատիպ դեպքերում մրցակցությունը պետք է լուծվի հօգուտ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի:

Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ և տարածքային սկզբունքների միջև մրցակցություն կարող է առաջանալ նաև նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցանքների դեպքում, երբ արարքը կատարվի մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա հասնեն այլ պետության տարածքում և ուղղված լինեն այդ պետության շահերի դեմ: Օրինակ՝ եթե ՀՀ տարածքում պայթյուն իրականացնելու նպատակով մեկ այլ պետության տարածքում Հայաստան ուղևորվող գնացքի մեջ տեղադրվում է հեռակառավարվող ռումբ, որը գործողության մեջ է դրվում ՀՀ տարածքում և վնաս է պատճառում ՀՀ շահերին, ապա հանցանք կատարած անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենքով<sup>19</sup>: Այսինքն՝ այս դեպքում մրցակցություն է առաջանում ՀՀ քրեական օրենքի տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և այլ պետության քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի միջև, որը տվյալ դեպքում պետք է լուծվի հօգուտ ՀՀ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի: Իսկ հակառակ իրավիճակում, երբ, օրինակ, այլ պետության տարածքում պայթյուն իրականացնելու նպատակով ՀՀ տարածքում տվյալ պետություն ուղևորվող գնացքի մեջ տեղադրվում է հեռակառավարվող ռումբ, որը գործողության մեջ է դրվում այդ պետության տարածքում և վնաս է պատճառում նրա շահերին, ապա հանցանք կատարած անձը պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի այդ պետության քրեական օրենքով: Նկարագրված իրավիճակում մրցակցություն է առաջանում ՀՀ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության տարածքային սկզբունքի և այլ պետության քրեական օրենքի՝ տարա-

<sup>19</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբրուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջ 61:

ծության մեջ գործողության ռեալ սկզբունքի միջև, որը տվյալ դեպքում պետք է լուծվի հոգուտ այլ պետության քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի:

Քրեական իրավունքին հայտնի է նաև քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության «հովանավորչության» սկզբունքը<sup>20</sup>: Այս սկզբունքի էությունն այն է, որ որոշակի կատեգորիայի օտարերկրյա քաղաքացիների վրա տարածվում է ոչ թե այն պետության քրեական իրավագործությունը, որտեղ նրանք գտնվում են և որտեղ հանցանք են կատարել, այլ այն պետության, որի քաղաքացին են<sup>21</sup>:

### **Հանցանք կատարած անձանց հանձնելը (Էքստրադիցիա)**

Հանցանք կատարած անձին հանձնելը պետության կողմից հանցանք կատարած անձին այն պետությանը հանձնելն է, որի տարածքում կատարվել է հանցանքը կամ որի քաղաքացին է հանցանք կատարած անձը: Հանցանք կատարած անձանց հանձնելու հարցերը հանգամանորեն կարգավորված են միջազգային բազմակողմ կամ երկկողմ համաձայնագրերով:

ՀՀ տարածքում, օրինակ, Բելառուսի Հանրապետության քաղաքացուն ձերբակալելու դեպքում, որը Ռուսաստանի Դաշնության տարածքում ենթադրաբար հանցանք է կատարել, նա ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսդրությամբ՝ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունքի, իսկ ՀՀ շահերի դեմ ուղղված հանցանք կատարած լինելու դեպքում՝ ռեալ սկզբունքին համապատասխան:

Ռուսաստանի և/կամ Բելառուսի իշխանությունների կողմից ՀՀ իշխանություններին հանցանք կատարած անձին հանձնելու առաջարկ ներկայացվելու դեպքում ՀՀ իշխանությունները, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» ԱՊՀ 1993 թ. կոնվենցիայի<sup>22</sup> համաձայն, պետք է քննարկեն անձին հանձնելու հարցը: Նշված պարագայում կարող է մրցակցություն առաջանալ մի կողմից քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ կամ ռեալ սկզբունքի և մյուս կողմից՝ հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև:

Նմանատիպ դեպքերում, կարծում ենք, որ քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձ-

<sup>20</sup> Որոշ հեղինակներ այս սկզբունքն անվանում են նաև հատուկ առաքելության սկզբունք, տե՛ս, օրինակ, Иногорова-Хегай Л.В., Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. М.: НОРМА, ИНФРА-М, 2019, էջեր 86, 87:

<sup>21</sup> Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս. Առաքելյան, Ա. Գաբուզյան, Հ. Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012, էջեր 68, 69:

<sup>22</sup> Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» ԱՊՀ 1993 թ. կոնվենցիա, [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_5942/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5942/) 17.07.2022 թ.:

ներու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում նախապատվությունը պետք է տրվի հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտին: Սակայն, կարծում ենք, որ իրավիճակն այլ է քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեալ սկզբունքի դեպքում կատարվածն այնպիսի հանցանք է, որն ուղղված է ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ՝ ապա, մեր կարծիքով, արդարացված է դիտվում հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքով: Հետևաբար, քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում նախապատվությունը պետք է տրվի քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքին:

### **Եզրակացություն**

Հանցագործությունների որակման համատեքստում քրեաիրավական նորմերի ժամանակային (տեմպորալ) մրցակցության հիմնախնդիրների համապարփակ հետազոտման և վերլուծության արդյունքում եկել ենք մի շարք եզրակացությունների, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին.

1. Տևող հանցագործության դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության արարքի փաստական ավարտի պահին գործող քրեական օրենքով: Այսինքն՝ այն օրենքով, որը գործել է անձի բռնվելու, մեղայականով ներկայանալու կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվելու պահին:

2. Տեսագործական առումով հետաքրքրական են այն դեպքերը, երբ տևող հանցագործության իրավաբանական ավարտը չի հանգեցնում դրա փաստացի ընդհատմանը, իսկ այդ ընթացքում փոխվում է քրեական օրենքը: Նմանատիպ իրավիճակներում անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի գրկում տևող հանցագործության հետագա իրականացումը ինքնուրույն հանցավոր բնույթից, ինչը պահանջում է համապատասխան քրեաիրավական արձագանք՝ լրացուցիչ որակում: Մեր կարծիքով՝ դիտարկվող իրավիճակներում պետք է ղեկավարվել այն կանոնով, ըստ որի՝ տևող հանցագործության համար ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը՝ որպես իրավական ֆիկցիա, ավարտում է այդ հանցագործության ընթացքը, իսկ դրանից հետո անձի՝ այդ հանցանքը շարունակելուն ուղղված փաստացի արարքները պետք է դիտարկվեն որպես ինքնուրույն հանցագործություն՝ ստանալով առանձին որակում: Որակման այս կանոնը ունիվերսալ է և կարող է կիրառվել նաև քրեական նույն օրենքի գործողության պայմաններում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ մեղադրական դատավճիռը չի ընդհատում տևող հանցագործության իրականացումը:



3. Շարունակվող հանցագործության պարագայում արդարացված և հիմնավոր է դիտվում արարքի կատարման ժամանակ համարել շարունակվող հանցագործության մեջ ընդգրկված արարքներից վերջինը կատարելու պահը:

4. Շարունակվող հանցագործության տեսակ համարվող վերանոց հանցագործության պարագայում ևս հանցագործության կատարման ժամանակ պետք է համարել արարքներից վերջինը կատարելու պահը, տվյալ դեպքում՝ մեկ հանցագործությունը առավել ծանր հանցագործության վերանելու պահը:

5. Երկրնտրելի արարքներով նկարագրված հանցագործությունների կատարման ժամանակի որոշումը կախված է այն հանգամանքից, թե քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածով նկարագրված երկրնտրելի արարքներից քանիսն է կատարել հանցավորը: Այս հանցանքների կատարման ժամանակի հարցի լուծումը դժվարություն չի ներկայացնում, երբ անձը կատարում է երկրնտրելի արարքներից մեկը. տվյալ դեպքում հանցանքի կատարման ժամանակ է համարվում այդ արարքը իրականացնելու պահը: Մինչդեռ, եթե անձը միասնական դիտավորությամբ իրականացնում է հոդվածի դիսպոզիցիայում նկարագրված երկրնտրելի արարքներից մի քանիսը, որոնց միջև առկա է ժամանակային խզում, ապա հանցանքի կատարման ժամանակ պետք է համարել դրանցից վերջինը կատարելու պահը:

6. Հանցանքը հանցակցությամբ կատարելու դեպքում կազմակերպչի, դրոշի և օժանդակողի արարքներն անհրաժեշտ է որակել նրանցից յուրաքանչյուրի արարքի կատարման պահին գործող օրենքով: Այն դեպքում, երբ կատարողը հանցակիցների դիտավորությունն իրականացնում է նոր՝ ավելի մեղմ օրենքի գործողության ընթացքում, հանցակիցների արարքները ևս, քրեական օրենքի հետադարձ ուժի կարգավորումներին համապատասխան, անհրաժեշտ է որակել նոր՝ ավելի մեղմ օրենքով:

7. ՀՀ քրեական նոր օրենսգրքում առկա չեն կարգավորումներ այն դեպքերի համար, երբ քրեական նոր օրենքը անձի պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող է և միաժամանակ անձի վիճակը վատթարացնող: Նմանատիպ դեպքերում հարց է առաջանում՝ արդյո՞ք օրենքին պետք է տալ հետադարձ ուժ, եթե այո, ապա ո՞ր մասով: Այսպիսի իրավիճակները Օրենսգրքով կարգավորված չեն: Օրենսգրքի 9-րդ հոդվածը կարգավորում է միայն այն դեպքերը, երբ քրեական նոր օրենքը պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող է և միաժամանակ մասնակիորեն խստացնող՝ ամրագրելով, որ նման օրենքը, քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման չափանիշների համապատասխան, հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը (հոդված 9-ը, մաս 6): Անձի վիճակի վատթարացումը, բնականաբար, տարբերվում է պատասխանատվության խստացումից: Հնարավոր են դեպքեր, երբ վատթարացումը չդրսևորվի պատասխանատվության խստացման տեսքով, այլ արտահայտվի հանցագործությունների դասակարգման մեջ փոփոխությամբ

կամ պատժի նշանակման կանոնների փոփոխությամբ: Նմանատիպ դեպքերը քրեական իրավունքի սկզբունքներին և քրեական օրենքի հետադարձ ուժի նորմերին համահունչ կարգավորելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկում ենք Օրենսգրքի՝ քրեական օրենքի հետադարձ ուժը վերտառությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասում կատարել համապատասխան լրացում՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ. «Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ մասնակիորեն խստացնող կամ անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը սույն հոդվածով նախատեսված չափանիշներին համապատասխան հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

8. Քրեական օրենքի հետադարձ ուժի և ընդհանուր ու հատուկ նորմերի մրցակցության կանոնների միաժամանակյա կիրառման դեպքում նախապատվությունն անհրաժեշտ է տալ քրեական օրենքի հետադարձ ուժի կանոններին:

9. Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված գործողությունը կամ անգործությունը:

10. Ձևական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների դրսևորում համարվող հատված հանցակազմով նկարագրված հանցագործությունների կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ կատարվել է օրենքով նկարագրված արարքը:

11. Նյութական հանցակազմի միջոցով նկարագրված այն հանցագործությունների պարագայում, երբ հանրորեն վտանգավոր արարքը (գործողությունը կամ անգործությունը) կատարվում և դրա հետևանքները վրա են հասնում միևնույն տարածքում, հանցանքի կատարման վայրի որոշման հետ կապված բարդություններ չեն առաջանում: Սակայն այլ է վիճակն այն դեպքերում, երբ գործողությունը (անգործությունը) կատարվում է մի պետության տարածքում, իսկ հետևանքները վրա են հասնում մեկ այլ պետության տարածքում: Նման դեպքերում հանցանքը կատարելու վայրի որոշումը կապված է որոշ բարդությունների հետ: Հիմք ընդունելով տարածության և ժամանակի անխզելիությունը՝ առավել հիմնավոր է թվում հանցանքի կատարման վայրը որոշել դրա կատարման ժամանակի հաշվառմամբ: Այս համատեքստում մենք կիսում ենք այն հեղինակների կարծիքը, որոնք նյութական հանցակազմի միջոցով նկարագրված հանցագործությունների կատարման վայր են համարում այն տարածքը, որտեղ կատարվել է հանրորեն վտանգավոր արարքը՝ անկախ նրանից, թե որտեղ են վրա հասել վտանգավոր հետևանքները: Այս առումով, սակայն, կարող են լինել որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով:

12. Տևող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր անհրաժեշտ է համարել այն վայրը, որտեղ փաստացի ավարտվել է տևող

հանցագործությունը: Այսինքն՝ այն վայրը, որտեղ բռնվել կամ մեղայականով ներկայացել է հանցանք կատարած անձը, կամ այլ հանգամանքների ուժով արարքն ավարտվել է: Այս պարագայում ևս առկա են որոշ բացառություններ՝ պայմանավորված քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի կիրառման առանձնահատկություններով, որոնց ևս անդրադարձ կկատարվի ռեալ սկզբունքին անդրադառնալիս:

13. Շարունակվող հանցագործությունների պարագայում հանցանքի կատարման վայր պետք է համարել այն տարածքը, որտեղ կատարվել է շարունակվող հանցագործության մեջ ընդգրկված արարքներից վերջինը:

14. Չավարտված հանցագործությունների դեպքում հանցանքի կատարման վայր է համարվում այն տարածքը, որտեղ դադարել կամ ընդհատվել է հանցավոր արարքը: Իսկ եթե հանցագործությունը (նախապատրաստությունը, հանցավորձը) սկսվել է մի պետության տարածքում, սակայն ավարտվել է մեկ այլ պետության տարածքում, ապա հանցանքի կատարման վայր պետք է համարել այն պետության տարածքը, որտեղ ավարտվել է հանցագործությունը:

15. Վիրտուալ տարածությունում (համացանցում) կատարվող հանցանքների դեպքերում հանցանքի կատարման վայր պետք է համարել համացանցը՝ որպես միասնական իրավական տարածք: Համացանցը հանցանքի կատարման վայր ճանաչելու դեպքում պետք է կիրառվի այն պետության իրավագործությունը, որտեղ բնակվում է (գտնվում է) տուժողը:

16. Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունքը բացառություն է ինչպես տարածքային, այնպես էլ քաղաքացիության սկզբունքներից: Այս սկզբունքի էությունն այն է, որ հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում յուրաքանչյուր պետության կողմից իր ազգային օրենսդրությամբ՝ անկախ նրանից, թե որտեղ է կատարվել հանցանքը, և որ պետության քաղաքացի է տվյալ անձը: Այս սկզբունքի կիրառումը պայմանավորված է միջազգային և միջազգային բնույթի որոշ հանցագործությունների դեմ պայքարի անհրաժեշտությամբ: Այսպիսով, հանցանքի կատարման վայրի պետության տարածքային, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության և ունիվերսալ սկզբունքների մրցակցության պարագայում առավելությունը պետք է տրվի ունիվերսալ սկզբունքին: Ավաճը նշանակում է, որ եթե անձի նկատմամբ քրեական հետապնդումը կարող է իրականացվել երեք պետությունների քրեական օրենսդրության համապատասխան (հանցանքի կատարման վայրի պետության, այն պետության, որի քաղաքացին է անձը, այն պետության, որտեղ քրեական պատասխանատվության է ենթարկվում), ապա առավելությունը պետք է տրվի այն պետության օրենսդրությանը, որտեղ անձը ենթարկվում է քրեական պատասխանատվության (ունիվերսալ սկզբունք): Սակայն ունիվերսալ սկզբունքի կիրառումն ունի որոշ

առանձնահատկություններ՝ պայմանավորված էքստրադիցիայի ինստիտուտով:

17. Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և հանցանքի կատարման վայրի պետության տարածքային սկզբունքի, ինչպես նաև իր պետության տարածքից դուրս հանցանք կատարելու պարագայում հանցանք կատարած անձի պետության քաղաքացիության սկզբունքի մրցակցության դեպքում նախապատվությունը, ըստ Օրենսգրքի, պետք է տրվի ռեալ սկզբունքին:

18. Քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ունիվերսալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում նախապատվությունը պետք է տրվի հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտին: Սակայն, կարծում ենք, որ իրավիճակն այլ է քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեալ սկզբունքի դեպքում կատարվածն այնպիսի հանցագործություն է, որն ուղղված է ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ՝ ապա, մեր կարծիքով, արդարացված է դիտվում հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկել ՀՀ քրեական օրենսգրքով: Հետևաբար, քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքի և հանցանք կատարած անձանց հանձնելու ինստիտուտի միջև մրցակցության պարագայում նախապատվությունը պետք է տրվի քրեական օրենքի՝ տարածության մեջ գործողության ռեալ սկզբունքին:

19. Օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի այն ձևակերպումը, ըստ որի՝ «եթե քրեական օրենքով նախատեսված արարքը նշված անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող տարածքում, ապա այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքի համար որպես պատիժ նախատեսված է ազատազրկում», մեր կարծիքով, վերանայման կարիք ունի: Նման ձևակերպումը թեև արդարացված է, սակայն անհարկի ընդլայնում է այն արարքների շրջանակը, որոնց պարագայում պետությունը պետք է արձագանքի, քանի որ քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցանքների ճշող մեծամասնության համար սանկցիայում նախատեսված է ազատազրկում: Թերևս ավելի ճիշտ կլիներ որոշակիորեն սահմանափակել ազատազրկման ժամկետը և օրենսդրորեն ամրագրել, որ այդ դրույթը կիրառելի է այն դեպքերում, երբ կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցանք: Մինևույն ժամանակ կարծում ենք, որ օրենսդրորեն պետք է ամրագրվի, որ եթե հանցանքը կատարվել է չճանաչված պետության տարածքում և քաղաքացիության սկզբունքին բավարարող սուբյեկտը հայտնվել է ՀՀ տարածքում, ապա նա ենթակա է պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքով՝ ՀՀ-ում այդ արարքը հանցանք համարվելու պարագայում: Ծարադրվածի հաշվառմամբ՝ առաջարկում ենք ՀՀ

քրեական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե նրանց կատարած արարքը հանցանք է համարվում դրա կատարման վայրի պետության օրենսդրությամբ, և եթե նրանք այդ արարքի համար քրեական պատասխանատվության չեն ենթարկվել: Եթե քրեական օրենքով նախատեսված արարքը նշված անձանց կողմից կատարվել է որևէ պետության չպատկանող **կամ չճանաչված պետության** տարածքում, ապա այդ արարքը կատարած անձինք ենթակա են քրեական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքը **Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծանր կամ առանձնապես ծանր հանցանք է:** Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե առկա են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված պայմաններ»:

**Գրականության ցանկ (reference list, список литературы)**

1. Ծովային իրավունքի ՄԱԿ 1982 թվականի կոնվենցիա  
United Nations Convention on the Law of the Sea, 1982.
2. Տիեզերական տարածության, ներառյալ Լուսնի և երկնային այլ մարմինների հետազոտման և օգտագործման պետությունների գործունեության սկզբունքների մասին 1967 թ. պայմանագիր  
Treaty on Principles Governing the Activities of States in the Exploration and Use of Outer Space, including the Moon and Other Celestial Bodies, 1967.
3. Օդանավերի մեջ կատարվող հանցանքների և որոշ այլ գործողությունների մասին 1963 թ. կոնվենցիա  
The Convention on Offences and Certain Other Acts Committed on Board Aircraft, 1963.
4. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին ԱՊՀ 1993 թ. կոնվենցիա  
Commonwealth of Independent States Convention on Legal Assistance and Legal Relations in Civil, Family and Criminal Matters, 1993.
5. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2021 թ. մայիսի 5, ՀՕ-199-Ն  
Criminal code of The Republic of Armenia, 2021 May 5.
6. Պետական սահմանի մասին Հայաստանի Հանրապետության օրենք, 2001 թ. նոյեմբերի 20, ՀՕ-265  
Law of The Republic of Armenia on the State border, 2001 November 20.
7. Ալվարդ Ստեփանյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 20.10.2011 թ. թիվ ԼԴ/0327/01/10 գործով որոշում  
Decision of the RA Court of Cassation regarding Alvard Stepanyan in case № LD/0327/01/10, 20.10.2011.
8. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), Ս.Առաքելյան, Ա.Գաբուզյան, Հ.Խաչիկյան և ուրիշ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2012  
Criminal law of The Republic of Armenia. General part (sixth edition, with changes and additions), S. Arakelyan, A. Gabuzyan, H. Khachikyan and other, Yerevan, YSU, 2012.
9. Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Քոչարյան Վ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2002  
International law. Study guide, Kocharyan V., Yerevan, YSU, 2002.
10. Актуальные проблемы Общей части уголовного права: учебник / отв. ред. И.А. Подройкина, И.А. Фаргиев. Москва, Проспект, 2020.

Actual problems of the General part of criminal law: textbook / ex. eds. I.A. Podroikina, I.A. Fargiev. – Moscow, Prospekt, 2020.

11. Действие российского уголовного закона в пространстве: законодательная регламентация и перспективы совершенствования с учётом опыта уголовного законодательства зарубежных стран: автореф. Фролова А. И. дис. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2013.  
The action of the Russian criminal law in space: legislative regulation and prospects for improvement, taking into account the experience of criminal legislation of foreign countries: autoref. Frolova A. I. dis. ... cand. jurid. sciences. Yekaterinburg, 2013.
12. Концептуальные основы конкуренции уголовно-правовых норм: монография. Иногамова-Хегай Л.В., М.: НОРМА, ИНФРА-М, 2019.  
Conceptual foundations of competition of criminal law norms: Monograph. *Inogamova-Hegai L. V* - М.: Legal Norm, SIC INFRA-M, 2019.
13. Об особенностях территориального принципа действия уголовного закона в сети Интернет, Комаров А.А. Вестник Омской юридической академии. 2016. № 4 (33).  
Characteristics of the Application of the Criminal Law for crimes, committed in the Internet, Anton Komarov. Bulletin of the Omsk Law Academy. 2016. № 4 (33).
14. Международное право (в двух книгах). Книга первая. Броунли Я. М., 1977.  
International law (in two books). The first book. Brownlee Ya. M., 1977.
15. Legal Implications of Territorial Sovereignty in Cyberspace // Heintschel von Heinegg W. 4th International Conference on Cyber Conflict. Tallinn, 2012.
16. Neue Revision der Grundbegriffe des Criminalrechts // Allgemeine Literatur-Zeitung. Köstlin R. 1845. № 92.  
New revision of the basic concepts of criminal law // General literature newspaper. Kotlin R 1845. № 92.
17. Prescriptive Jurisdiction over Internet Activity: The Need to Define and Establish the Boundaries of Cyberliberty. Miller S. *Indiana Journal of Global Legal Studies*, vol. 10, iss. 2, art. 8.
18. State Criminal Laws in Cyberspace: Reconciling Freedom for Users with Effective Law Enforcement. Thornton S. *Richmond Journal of Law & Technology*, 1997, vol. IV, iss. 2.
19. Überlegungen zur strafrechtlichen Interpretation des Ubiquitätsprinzips im Zeitalter des Internet. Hilgendorf E. *Neue juristische Wochenschrift*, 1997, no. 29.  
Considerations on the criminal law interpretation of the principle of ubiquity in the age of the Internet. Hilgendorf E. New legal weekly, 1997, N 29.

**Gevorg Barseghyan**

*Ph.D. Student and Lecturer at the Chair of Criminal Law of  
Law Faculty of Yerevan State University*

## **TEMPORAL AND SPATIAL COMPETITION OF CRIMINAL LAW NORMS IN THE CRIME CLASSIFICATION PROCESS<sup>1</sup>**

### **Abstract**

Overcoming the collision of criminal law norms is an important issue in the crime classification process. The principles of criminal law oblige to accurately investigate the criminal conduct and to impose an appropriate criminal liability against those who committed the crime. Addressing the issue, however, remains a rather complex matter due to a series of objective and subjective circumstances.

The collision of criminal law norms is an encompassing phenomenon that is present in the entire process of the development of criminal law relations – from the fact of committing the crime to the removal or nullification of the criminal record. The objective of the following article is to comprehensively investigate the issues related to the temporal and spatial competition of criminal law norms within the scope of crime classification process.

The subject of the study was examined with the use of general and special scientific methods, such as dogmatic, comparative legal, logical and legal modelling.

On the basis of the conducted research the article presents practical-scientific recommendations related to the crime qualification process in view of competition of criminal legal norms that exist at different periods of time (temporal competition), as well as the competition of criminal law norms of the Republic of Armenia with foreign and international legal norms (spatial competition).

**Keywords:** collision of criminal law norms; application of criminal law in time; retroactive effect of criminal law; complex single crimes; principles of application of criminal law in space: spatial, diplomatic immunity, citizenship, ideal and real; crimes committed in virtual space (the Internet); extradition.

---

<sup>1</sup> The article was presented on 08.02.2023 and was reviewed on 22.03.2023.



**Геворг Барсегян**

*Аспирант и преподаватель кафедры Уголовного права  
юридического факультета Ереванского государственного университета*

## **ТЕМПОРАЛЬНАЯ И ПРОСТРАНСТВЕННАЯ КОНКУРЕНЦИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ ПРИ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ<sup>1</sup>**

### **Абстракт**

Своей важностью в процессе квалификации преступлений выделяется преодоление конкуренции уголовно-правовых норм. Принципы уголовного права обязывают дать точную уголовно-правовую оценку преступному деянию и в соответствии с совершённым привлечь к уголовной ответственности лицо, совершившее его. Однако, решение проблемы затрудняется из-за некоторых объективных и субъективных обстоятельств.

Конкуренция уголовно-правовых норм – многокомпонентное явление, которое присутствует во всём процессе развития уголовно-правовых отношений от факта совершения преступления до снятия или погашения судимости.

Целью данного исследования является комплексное исследование проблем темпоральной (временной) и пространственной конкуренции уголовно-правовых норм при квалификации преступлений.

Объект и предмет исследования рассматривались с применением таких общих (общенаучных) и специальных методов научного познания, как догматическое, сравнительно-правовое, логическое и правовое моделирование.

На основании проведённого исследования в статье представлены предложения, имеющие научно-практическое значение с точки зрения квалификации преступлений при конкуренции уголовно-правовых норм, действующих в разные периоды времени (временная конкуренция), а также при конкуренции уголовно-правовых норм РА с нормами других государств и международно-правовыми нормами (пространственная конкуренция).

**Ключевые слова:** конкуренция уголовно-правовых норм; действие уголовного закона во времени; обратная сила уголовного закона; сложные единичные преступления; принципы действия уголовного закона в пространстве: территориальный, дипломатической неприкосновенности, гражданства, универсальный и реальный; преступления, совершаемые в виртуальном пространстве (в интернете); экстрадиция.

<sup>1</sup> Статья была представлена 08.02.2023 и прошла рецензирование 22.03.2023.